

Կ Ա Ր Գ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պետական վիճակագրական դիտարկումների իրականացման նպատակով վիճակագրական տեղեկությունների հավաքագրման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ իմաստով որ դրանք սահմանված են «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում:

3. Վիճակագրական տեղեկությունների հավաքագրումը ներառում է վիճակագրական տեղեկություններ տրամադրողներին վիճակագրական դիտարկումներում ընդգրկումը և իրազեկումը, վիճակագրական տեղեկություններ տրամադրողներին վիճակագրական դիտարկման փաստաթղթերով (այսուհետ՝ վիճակագրական փաստաթուղթ) ապահովումը, վիճակագրական տեղեկությունների ներկայացումը, պետական վիճակագրություն իրականացնող մարմինն ներկայացված վիճակագրական դիտարկման փաստաթղթերի ընդունումը և դրանց հետ կապված այլ գործողություններ:

4. Սույն կարգը չի տարածվում մարդահամարի, գյուղատնտեսական համատարած հաշվառման և այլ համատարած հաշվառումների ժամանակ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, ինչպես նաև վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների՝ վարչական ռեգիստրներից ստացվող ամփոփ տեղեկատվության ներկայացման վրա:

II. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

5. Սույն կարգի իմաստով վիճակագրական տեղեկություններ տրամադրողներ (այսուհետ՝ ռեսպոնդենտներ) են հանդիսանում՝

1) իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը.

2) իրավաբանական անձանց դուստր ձեռնարկությունները, մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, առանձնացված ստորաբաժանումները.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող օտարերկրյա սուբյեկտները, ինչպես նաև օտարերկրյա սուբյեկտների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող ստորաբաժանումները.

4) պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները.

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձինք՝ անկախ իրենց քաղաքացիությունից և իրավական կարգավիճակից կամ նման անձանց խմբեր, ինչպիսիք են՝ տնային (քաղաքային և գյուղական) տնտեսությունները.

6) այլ սուբյեկտ, որը կարող է տիրապետել վիճակագրական հետազոտության նպատակներին համապատասխանող տեղեկատվության:

6. Պետական վիճակագրական դիտարկումների մեթոդաբանությունը (ներառյալ՝ ցուցանիշների սահմանումները, դասակարգումները, վիճակագրական դիտարկումներում ընդգրկման ձևերը՝ համատարած կամ ընտրանքային) սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից:

7. Պետական վիճակագրական տեղեկությունները (տվյալները) հավաքագրվում (տրամադրվում) են Խորհրդի կողմից հաստատված ձևի վիճակագրական փաստաթղթերի միջոցով:

8. Վիճակագրական տեղեկությունները հավաքագրվում են հետևյալ տեսակի վիճակագրական փաստաթղթերի միջոցով՝

1) պետական վիճակագրական հաշվետվություններ.

2) հետազոտությունների հարցաթերթեր.

3) պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող տեղեկանքներ և Խորհրդի կողմից հաստատված այլ փաստաթղթեր:

III. ՌԵՍՊՈՆԴԵՆՏՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ԿԱՄ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ ՀԱՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. Պետական վիճակագրական դիտարկումներում ընդգրկվելու կամ դիտարկումներից հանվելու մասին ռեսպոնդենտները պետական վիճակագրություն իրականացնող մարմնի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից նախապես գրավոր իրազեկվում են՝ սույն կարգով սահմանված իրազեկման գրությամբ (Ձև 1): Իրազեկման գրության մեջ պարտադիր նշվում են՝

1) ռեսպոնդենտի անվանումը (անունը, ազգանունը).

2) նշում այն մասին, որ ռեսպոնդենտն ընդգրկվել է պետական վիճակագրական դիտարկումներում.

3) ռեսպոնդենտերի իրավունքներն ու պարտականությունները.

4) նշում օրենքով սահմանված պատասխանատվության մասին.

5) հղում համապատասխան իրավական ակտերին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջին.

6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համապատասխան ստորաբաժանման գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

10. Գրավոր իրազեկումն ուժի մեջ է այնքան ժամանակ, քանի դեռ ռեսպոնդենտը գրավոր չի իրազեկվում պետական վիճակագրական դիտարկումներից դուրս հանվելու մասին կամ դեռ չի լրացել ընդգրկման մասին պաշտոնական գրության մեջ նշված ժամկետը:

11. Պետական վիճակագրական դիտարկումներում ընդգրկվելու մասին իրազեկված ռեսպոնդենտը վիճակագրական փաստաթղթերը ներկայացնում է իրազեկումը ստանալուց հետո առաջին հաշվետու ժամանակաշրջանից սկսած, եթե իրազեկման գրության մեջ այլ բան նախատեսված չէ: Վիճակագրական դիտարկումներում ընդգրկվելու պահից ռեսպոնդենտը պարտավոր է պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պահանջով ներկայացնել նաև տվյալ տարվան, ինչպես նաև ընդգրկմանը նախորդող տարվան վերաբերող վիճակագրական փաստաթղթերը (անհրաժեշտության դեպքում՝ ամսական բաշխվածությամբ):

12. Միանվագ հետազոտությունների դեպքում ռեսպոնդենտներն իրազեկվում են մինչև հետազոտությունը սկսելը:

13. Եթե պետական վիճակագրական դիտարկումներում ընդգրկված ռեսպոնդենտը սահմանված կարգով իրազեկվելուց հետո փոխում է իր գործունեության տեսակը կամ սկսում է զբաղվել նաև այլ գործունեությամբ, ապա այդ գործունեության տեսակի համապատասխան վիճակագրական փաստաթղթերը ներկայացվում են հաջորդող հաշվետու ժամանակաշրջանից՝ առանց լրացուցիչ իրազեկման:

14. Սույն կարգով սահմանված գրավոր իրազեկումից հետո այլ տեսակի վիճակագրական հետազոտությունում ընդգրկվելու, ինչպես նաև վիճակագրական փաստաթղթերի ներկայացման պարբերականության փոփոխության դեպքում ռեսպոնդենտն այդ մասին լրացուցիչ իրազեկվում է սույն կարգի դրույթներին համապատասխան:

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով միացման կամ վերակազմավորման ձևով վերակազմակերպվելիս ռեսպոնդենտը շարունակում է ներկայացնել համապատասխան վիճակագրական փաստաթղթերն առանց սույն կարգով սահմանված գրավոր իրազեկման:

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բաժանման, առանձնացման և միաձուլման ձևով վերակազմակերպվելիս նոր ստեղծված իրավաբանական անձը (անձինք) վիճակագրական դիտարկումներում ընդգրկվելու մասին իրազեկվում են սույն կարգով սահմանված ձևով:

IV. ՌԵՍՊՈՆԴԵՆՏՆԵՐԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԶԵՎԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

17. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը ապահովում է ռեսպոնդենտների համար վիճակագրական փաստաթղթերն իրենց կողմից նախընտրելի եղանակով (թղթային կամ էլեկտրոնային) ներկայացնելու հնարավորություն, մասնավորապես՝

1) անվճար տրամադրում էլեկտրոնային կողմից հաստատված վիճակագրական փաստաթղթերի ձևերը.

2) էլեկտրոնային եղանակով վիճակագրական փաստաթղթերը ներկայացնելու համար ապահովում է այդ փաստաթղթերի ձևերի և դրանց լրացման հրահանգների հասանելիությունը պաշտոնական կայքէջի միջոցով.

3) պաշտոնական կայքէջի միջոցով ապահովում է ռեսպոնդենտներին վիճակագրական տեղեկատվության հավաքագրման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը:

18. Վիճակագրական փաստաթղթերի ձևերը ռեսպոնդենտները ստանում են ինքնուրույնաբար՝ իրենց գործունեության իրականացման վայրի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համապատասխան ստորաբաժանումներից կամ ներբեռնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջից:

19. Վիճակագրական փաստաթղթերի ձևերը ռեսպոնդենտներին տրվում են անվճար՝ երկու օրինակից:

20. Վիճակագրական փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելը չի կարող հիմք հանդիսանալ ռեսպոնդենտին վիճակագրական փաստաթղթերի թղթային ձևերը չտրամադրելու համար:

V. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Վիճակագրական փաստաթղթերը ռեսպոնդենտները լրացնում և ներկայացնում են ինքնուրույնաբար, եթե այլ բան նախատեսված չէ տվյալ փաստաթղթով:

22. Վիճակագրական փաստաթղթերը, եթե դրանցում այլ բան նախատեսված չէ, պետք է ստորագրվեն ռեսպոնդենտի ղեկավարի կամ նրա ներկայացուցչի կողմից:

23. Հաշվետու ժամանակաշրջանում գործունեություն իրականացրած չլինելու դեպքում, ներկայացվող վիճակագրական փաստաթղթերի՝ հաշվետու ժամանակաշրջան(ներ)ին վերաբերող համապատասխան մասերում դրվում են գծիկներ կամ փակման (Z) նշան:

24. Ռեսպոնդենտը գործունեության կամ գործունեության տեսակի դադարեցման դեպքում ներկայացնում է սույն կարգով սահմանված ձևի հայտարարություն (Ձև 2): Այս դեպքում գործունեության կամ գործունեության տեսակի դադարեցման օր է համարվում հայտարարության մեջ նշված օրը:

25. Սույն կարգի 24-րդ կետով սահմանված հայտարարությունը չի ազատում ռեսպոնդենտին մինչ գործունեության դադարեցման օրն ընկած հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ վիճակագրական փաստաթղթերի ներկայացման պարտականությունից: Այս դեպքում վիճակագրական փաստաթղթերը ներկայացվում են հայտարարության հետ կամ այդ փաստաթղթերի համար սահմանված ժամկետներում:

26. Գործունեությունը կամ գործունեության տեսակը վերսկսելու դեպքում ռեսպոնդենտը շարունակում է ներկայացնել համապատասխան վիճակագրական փաստաթղթերը:

27. Այն ռեսպոնդենտները, որոնք միաժամանակ գործունեություն են իրականացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարբեր շրջաններում, յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնում են տվյալ գործունեության գծով վիճակագրական տեղեկատվությունը (ցուցանիշները)՝ նաև շրջանային բաշխվածությամբ:

VI. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

28. Վիճակագրական փաստաթղթերը ռեսպոնդենտները ներկայացում են իրենց գործունեության իրականացման վայրի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության ստորաբաժանմանը կամ ուղարկում են այդ ստորաբաժանման էլեկտրոնային փոստի հասցեով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարբեր շրջաններում գործունեություն իրականացնելու դեպքում, վիճակագրական փաստաթղթերը ներկայացվում են ռեսպոնդենտի նախընտրելի վայրի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության ստորաբաժանմանը:

29. Գործունեության իրականացման վայրի փոփոխության դեպքում ռեսպոնդենտները տեղեկացնում են գործունեության իրականացման վայրի փոփոխության մասին՝ սույն կարգով սահմանված ձևով (Ձև 3):

30. Վիճակագրական փաստաթղթերը ներկայացվում են դրանցում նշված ժամկետներում և պարբերականությամբ:

31. Վիճակագրական փաստաթղթերը լրացվում են համաձայն տվյալ փաստաթղթի լրացման հրահանգի կամ ցուցումների:

32. Վիճակագրական փաստաթղթերը, ինչպես նաև սույն կարգով սահմանված մյուս փաստաթղթերը ներկայացվում են առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով՝ ռեսպոնդենտի ընտրությամբ:

33. Վիճակագրական փաստաթղթի ներկայացման օր է համարվում՝

1) փոստային կապի միջոցով վիճակագրական փաստաթղթի ներկայացման դեպքում այն փոստային կապի կազմակերպությանը հանձնելու օրը.

2) առձեռն ներկայացման դեպքում՝ ներկայացման օրը.

3) էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում՝ ռեսպոնդենտի կողմից դրա ուղարկման օրը:

34. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համապատասխան ստորաբաժանումն իրականացնում է ներկայացված

վիճակագրական փաստաթղթերի հաշվառում: Վիճակագրական փաստաթուղթը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում, այն ենթակա է գրանցման ստորաբաժանումում առկա գրանցամատյանում՝ նշելով ներկայացման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը:

35. Առձեռն ներկայացման դեպքում գրանցումն իրականացվում է ներկայացման պահին: Առձեռն ներկայացնողը ստորագրում է գրանցամատյանի համապատասխան մասում:

36. Վիճակագրական փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար ռեսպոնդենտն այդ մասին իրազեկում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համապատասխան ստորաբաժանմանը: Այդ նպատակով ռեսպոնդենտը լրացնում է սույն կարգով սահմանված տեղեկատվության ձևը (Ձև 4) և ուղարկում է իր գործունեության վայրի համապատասխան ստորաբաժանման էլեկտրոնային փոստի հասցեով:

37. Վիճակագրական փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում ռեսպոնդենտը ներբեռնում է իր գործունեության տեսակին համապատասխան վիճակագրական փաստաթղթերի ձևերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության www.stat-nkr.am պաշտոնական կայքէջի «Վիճակագրական հաշվետվությունների ձևեր» բաժնից: Յուրաքանչյուր լրացված վիճակագրական փաստաթուղթ ստորագրվում է էլեկտրոնային ստորագրությամբ և էլեկտրոնային փոստով ուղարկվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համապատասխան ստորաբաժանման էլեկտրոնային փոստի հասցեով: Յուրաքանչյուր վիճակագրական փաստաթուղթ ուղարկվում է առանձին էլեկտրոնային նամակով:

38. Վիճակագրական փաստաթուղթը էլեկտրոնային փոստով ուղարկելիս ռեսպոնդենտը էլեկտրոնային նամակի «սարքեքթ» (subject) կամ «տեմա» (тема) տողում նշում է իր անվանումը (անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը, հաշվետվական ձևի կրճատ անվանումը, պարբերականությունը և հաշվետու ժամանակաշրջանը:

39. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը ապահովում է ռեսպոնդենտի հետադարձ էլեկտրոնային ծանուցումը՝ վիճակագրական փաստաթղթի ստացված լինելու մասին:

40. Վիճակագրական փաստաթղթերը ներկայացվում են ըստ ռեսպոնդենտի գործունեության տեսակի: Ռեսպոնդենտն ընտրում է իր գործունեության տեսակին համապատասխան վիճակագրական հաշվետվությունների ցանկը՝ օգտվելով www.stat-nkr.am պաշտոնական կայքէջի «Տեղեկատվություն ռեսպոնդենտների համար» բաժնի վիճակագրական հաշվետվությունների փնտրման համակարգից:

VII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՍԻԱԼՆԵՐ ԵՎ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

41. Վիճակագրական փաստաթղթում սխալների առկայության դեպքում դրանք ենթակա են ուղղման:

42. Եթե վիճակագրական փաստաթղթի տվյալների ուղղումը պահանջում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերում գրանցումների փոփոխություն կամ որոշակի տևական ժամանակահատված, ապա ճշգրտված վիճակագրական փաստաթուղթը ներկայացվում է հաջորդ ժամանակաշրջանի վերաբերյալ ներկայացվող վիճակագրական փաստաթղթի հետ միասին՝ բացառությամբ եռամսյակային և տարեկան պարբերականությամբ ներկայացվող վիճակագրական փաստաթղթերի:

43. Եռամսյակային և տարեկան պարբերականությամբ վիճակագրական փաստաթղթերը ներկայացվում են սխալը հայտնաբերելուց հետո համապատասխանաբար 15 և 30 օրվա ընթացքում:

44. Ճշգրտված վիճակագրական փաստաթղթի դիմային էջի վրա նշվում է «ճշգրտված է» գրառումը:

(ոեսպոնդենդի անվանումը, (անունը, ազգանունը),
գտնվելու (բնակության) վայրը)

Հարգելի գործընկեր

Սույն գրության նպատակն է իրազեկել, որ համաձայն «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի, Դուք հանդիսանում եք վիճակագրական տեղեկություններ տրամադրող և ընդգրկվել եք պետական վիճակագրական դիտարկումներում:

Պետական վիճակագրական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համար կարևոր է Ձեր վստահությունն ու աջակցությունը:

Համաձայն Օրենքի 20-րդ հոդվածի, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների պարտականություններ են.

1) սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել անհրաժեշտ վիճակագրական տվյալներ և տեղեկություններ.

2) կատարել պետական վիճակագրության և հաշվառման վերաբերյալ վիճակագրություն իրականացնող մարմնի ցուցումները:

Համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի, Ձեր կողմից ներկայացված վիճակագրական գաղտնիք համարվող տվյալները հրապարակման կամ այլ ձևով տարածման ենթակա չեն:

Հավաքագրված վիճակագրական տվյալների անանունությունը պահպանելը պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պարտականությունն է:

Վիճակագրական տեղեկությունները ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից սահմանված ձևի վիճակագրական փաստաթղթերի միջոցով:

Վիճակագրական փաստաթղթերը կարող եք ներկայացնել Ձեր կողմից նախընտրելի եղանակով՝ թղթային (առձեռն և փոստով) կամ էլեկտրոնային:

Վիճակագրական հաշվետվությունների ձևերը կարող եք անվճար ստանալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համապատասխան ստորաբաժանումից կամ ներբեռնել www.stat-nkr.am պաշտոնական կայքէջի «Վիճակագրական հաշվետվությունների ձևեր» բաժնից:

Վիճակագրական հաշվետվությունները պետք է ներկայացվեն ըստ Ձեր կողմից իրականացվող գործունեության տեսակի (տեսակների)՝ համաձայն «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» (NACE rev.2) 2-րդ խմբավորման:

Ստորև թվարկված վիճակագրական հաշվետվությունների ձևերից ընտրեք Ձեր գործունեության տեսակին համապատասխան վիճակագրական հաշվետվությունների ցանկը՝ օգտվելով www.stat-nkr.am պաշտոնական կայքէջի «Տեղեկատվություն ոեսպոնդենտների համար» բաժնի վիճակագրական հաշվետվությունների փնտրման համակարգից.

Եթե Դուք միաժամանակ գործունեություն եք իրականացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարբեր շրջաններում, ապա յուրաքանչյուր եռամսյակ պետք է ներկայացնեք նաև տվյալ գործունեության գծով վիճակագրական տեղեկատվությունը (ցուցանիշները)՝ շրջանային բաշխվածությամբ:

Վիճակագրական հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար լրացրեք և էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկեք համապատասխան ձևը (Ձև 4), որը կարող եք գտնել www.stat-nkr.am պաշտոնական կայքէջի «Տեղեկատվություն ռեսպոնդենտների համար» բաժնում: Նշված ձևն ուղարկելուց հետո կարող եք անցնել վիճակագրական հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացմանը:

Վիճակագրական հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացվում են www.stat-nkr.am պաշտոնական կայքէջում տեղադրված ձևաչափով:

Գործունեության տեսակի փոփոխության կամ գործունեության նոր տեսակ սկսելու դեպքում՝ այդ տեսակին համապատասխան վիճակագրական հաշվետվությունները ևս պետք է ներկայացվեն՝ առանց լրացուցիչ իրազեկման:

Վիճակագրական փաստաթղթերի ներկայացման գործընթացին, ինչպես նաև Ձեզ հետաքրքրող մյուս հարցերին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության www.stat-nkr.am պաշտոնական կայքէջի «Տեղեկատվություն ռեսպոնդենտների համար» բաժնից:

Սույն իրազեկումից հետո այլ տեսակի վիճակագրական հետազոտությունում ընդգրկվելու, ինչպես նաև վիճակագրական հաշվետվությունների ներկայացման պարբերականության փոփոխության դեպքում լրացուցիչ կիրազեկվի:

Ստորաբաժանման էլեկտրոնային փոստի հասցեն է -----:

Ստորաբաժանման հեռախոսահամարն է -----:

Առանցքային իրավական ակտեր են.

«Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենք.
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հունիսի 30-ի «Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 17-ի N5 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N23 -Ն որոշում:

Սույն իրազեկումն ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ Դուք գրավոր չեք իրազեկվում տվյալների տրամադրման դադարեցման մասին:

«Պեղական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 169.² հոդվածով սահմանված կարգով:

Շնորհակալություն համագործակցության համար

ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի _____
(ստորաբաժանման անվանումը)

պետ _____-ին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործունեության կամ գործունեության տեսակի դադարեցում նախատեսելու վերաբերյալ

Սույն հայտարարությամբ տեղեկացնում եմ, որ _____

(ռեսպոնդենտի անվանումը (անունը, ազգանունը))

սկսած «__» _____ 20__թ-ից դադարեցնում է գործունեությունը

- 1) ամբողջությամբ.
- 2) գործունեության հետևյալ տեսակների գծով՝

(1-ին դեպքում ընդգծվում է, 2-րդ դեպքում նշվում է գործունեության տեսակի անվանումը և ծածկագիրը)

Պարտավորվում եմ գործունեությունը (գործունեության տեսակը) վերսկսելու դեպքում տվյալ հաշվետու ժամանակաշրջանից սկսած ներկայացնել համապատասխան վիճակագրական փաստաթղթերը:

Տվյալներ ռեսպոնդենտի վերաբերյալ

Գտնվելու (բնակության) վայրը _____ |__|__|__|__|__|
(փոստային դասիչ)

Էլեկտրոնային փոստ _____

Հեռախոս(ներ) _____

Պետական ռեգիստրում գրանցման համարը |__|__|__|__|__|__|__|__|__|__|

Նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը |__|__|__|__|__|__|

(լրացվում է ԼՂՀ ԱՎԾ-ի կողմից)

Հարկ վճարողի հաշվառման համարը |__|__|__|__|__|__|

Ղեկավար՝ _____ Ստորագրություն

ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի _____
(ստորաբաժանման անվանումը)
պետ _____-ին

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույնով տեղեկացնում եմ, որ _____

(ռեսպոնդենտի անվանումը (անունը, ազգանունը))

գործունեության իրականացման վայրի փոփոխությամբ պայմանավորված, սկսած

«___» _____ 20--թ-ից վիճակագրական փաստաթղթերը նախատեսում է ներկայացնել ԼՂՀ ԱՎԾ

_____ ստորաբաժանում:
(առանձնացված ստորաբաժանման անվանումը)

Տվյալներ ռեսպոնդենտի վերաբերյալ

Գտնվելու (բնակության) վայրը _____

Գործունեության իրականացման
վայրը _____ | | | | | | | | | |
(փոստային դասիչ)

Էլեկտրոնային փոստ _____

Հեռախոս(ներ) _____

Պետական ռեգիստրում գրանցման համարը | | | | | | | | | | | | | |

Նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը | | | | | | | | | |

(լրացվում է ԼՂՀ ԱՎԾ-ի կողմից)

Հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | | |

Ղեկավար՝ _____

Ստորագրություն

ԼՂՀ ԱԿԾ աշխատակազմի _____
(ստորաբաժանման անվանումը)

պետ _____-ին

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրական փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին

Սույնով տեղեկացնում եմ, որ _____ - ը
(ռեսպոնդենտի անվանումը (անունը, ազգանունը))

նախատեսում է վիճակագրական փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

Տվյալներ ռեսպոնդենտի վերաբերյալ

Գտնվելու (բնակության) վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Պետական ռեգիստրում գրանցման համարը |_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|

Հարկ վճարողի հաշվառման համարը |_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|_|

Էլեկտրոնային փոստի հասցեն _____

Գործունեության տեսակը (տեսակները) _____

նշվում է գործունեության ստույգ տեսակը համաձայն «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» 5-անիշ դասակարգման:

Հեռախոս _____

Դիմող _____
(անուն ազգանուն)

Ստորագրություն

«_____» _____ 20__թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Ազգային վիճակագրական ծառայության
Աշխատակազմի ղեկավար՝ Լ. Հարությունյան